

# k,n հաջորդականություններ

Բնական թվերի  $a_1, a_2, \dots, a_k$  հաջորդականությունն անվանենք  $(k,n)$ -կատարյալ, եթե այն բավարարում է  $1 \leq a_1 < a_2 < \dots < a_k \leq n$  պայմանին, և այդ հաջորդականության ցանկացած երկու հարևան անդամների գումարը կենտ թիվ է:

Դուք պետք է գրեք ծրագիր, որը տրված  $k$  և  $n$  թվերի համար հաշվի  $(k, n)$ -կատարյալ հաջորդականությունների քանակը:

## Մուտքը

Մուտքում տրված են  $k$  և  $n$  ամբողջ թվերը ( $1 < k < n \leq 101$ ):

## Ելքը

Ելքում պետք է արտածել մի ամբողջ թիվ՝  $(k, n)$ -կատարյալ հաջորդականությունների քանակը:

## Օրինակ

Մուտքը.

2 3

Ելքը.

2

Մուտքը.

2 4

Ելքը.

4